

Հնազանդիլ իրենց առաջնորդին (15) : Այլուստ հայ երեսփոխանները Յակոբ Կաթողիկոսը կը վստահեցնեն իրենց սիրոյն եւ փարումին մասին՝ հանդէպ էջմիածնի Աթոռին եւ հայ եկեղեցւոյ հայրենի ծէսերուն, արարողութիւններուն եւ աւանդութիւններուն : Եւ կը խնդրեն Կաթողիկոսէն որ շարունակէ իր հայրական հոգածութիւնը եւ զիրենք օրհնէ իբրեւ իր հարազատ որդիները (16) : Եւ գիտնալով որ Հաւատոյ Տարածման Սրբազան Ժողովին անդամացող կարգ մը անձերու մօտ որոշ վերապահութիւն մը կայ Յակոբ Զուղայեցիին հանդէպ, 13 Փետրուար 1672ին Սրբազան Ժողովին կը յայտնեն իրենց հաւատարմութիւնը հանդէպ Կաթողիկոսին, յայտարարելով անոր Կաթողիկէութիւնը եւ անկեղծ միութիւնը Հոռմի Ս. Աթոռին հետ, եւ զայս կ'ապացուցանեն բազմաթիւ նամակներով, զորս Կաթողիկոսը այդ ուղղութեամբ զրած էր Ս. Քահանայապետին (17) :

---

(15) Առաքել Դարիժեցի, Անդ 299-300 :

(16) Sac. Gregorio Petrowicz, Ibidem 275-276, 286-287.

(17) Petrowicz, ibidem 289.